ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 օգոստոսի 2016 թվականի N 848 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1691-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Սոցիալական փաթեթի հատկացման կարգը և փաթեթի մեջ մտնող ծառայությունների բովանդակությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1917-Ն և 1923-Ն, ինչպես նաև 2012 թվականի ապրիլի 19-ի N 594-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1691-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ ենթակետով.

«6) զինծառայողի կամ քրեակատարողական ծառայողի կամ փրկարար ծառայության ծառայողի պարտադիր կանխարգելիչ բժշկական քննությունից չօգտվելու վերաբերյալ միասնական տեղեկանքի տրամադրման ընթացակարգը՝ համաձայն N 6 հավելվածի:».

2) որոշման 4.5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.5. Զինծառայողների, քրեակատարողական ծառայողների, փրկարար ծառայության ծառայողների սոցիալական փաթեթի հատկացման համար գործում են սույն որոշման 1-ին կետի

1-ին ենթակետով հաստատված կարգի դրույթները՝ բացառությամբ կարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետի, ընդ որում, այդ անձանց վրա չեն տարածվում նաև սույն որոշման 5.2-րդ, 5.3-րդ, 5.4-րդ կետերի և սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N 2 հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի դրույթները: Բանկում, նշված անձանց համար, պարտադիր կանխարգելիչ բժշկական քննությունից չօգտվելու հիմք կարող է հանդիսանալ զինծառայող կամ քրեակատարողական ծառայող կամ փրկարար ծառայության ծառայող լինելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթը կամ տեղեկանքը, կամ պարտադիր կանխարգելիչ բժշկական քննությունից չօգտվելու վերաբերյալ միասնական տեղեկանքը:».

3) որոշման 5.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.2. Սահմանել, որ 2015 թվականի հունվարի 1-ից հետո սոցիալական փաթեթի շահառուների համար (բացառությամբ զինծառայողների, քրեակատարողական ծառայողների, փրկարար ծառայության ծառայողների) սոցիալական փաթեթի ծառայություններից օգտվելու պարտադիր նախապայման է կանխարգելիչ բժշկական քննության բաղադրիչից օգտվելը: Ընդ որում, 2015 թվականն անցումային ժամանակաշրջան է, որի ընթացքում սոցփաթեթի շահառուն սոցփաթեթի ծառայություններից կարող է օգտվել առանց նշված նախապայմանի, իսկ 2015 թվականի ընթացքում պարտադիր կանխարգելիչ բժշկական քննություն անցնելն ակտիվացնում է սոցիալական փաթեթի՝ 2016 թվականի համար սույն որոշման N 2 հավելվածով նախատեսված ծառայությունները և (կամ) սոցփաթեթի հաշվում առկա դրամական միջոցները կանխիկացնելու իրավունքը: 2016 թվականին պարտադիր կանխարգելիչ բժշկական քննություն անցնելն ակտիվացնում է սոցիալական փաթեթի՝ սույն որոշման N 2 հավելվածով նախատեսված ծառայությունները և (կամ) սոցփաթեթի հաշվում առկա դրամական միջոցները կանխիկացնելու իրավունքը տվյալ և հաջորդ տարվա համար, իսկ 2017 թվականից սկսած պարտադիր կանխարգելիչ բժշկական քննություն անցնելն ակտիվացնում է սոցիալական փաթեթի՝ սույն որոշման N 2 հավելվածով նախատեսված ծառայությունները և (կամ) սոցփաթեթի հաշվում առկա դրամական միջոցները կանխիկացնելու իրավունքը կանխարգելիչ

բժշկական քննությունն անցնելու վերաբերյալ տեղեկանքն ստանալու օրվանից մեկ տարի ժամկետով:».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.5-րդ կետով.

«5.5. Սահմանել, որ սույն որոշման 5.2-րդ կետի և N 1 հավելվածի 4-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթները չեն տարածվում այն անձանց վրա, ովքեր աշխատանքից ազատվել են և սոցփաթեթի հաշվի միջոցներն օգտագործելու պահին չեն հանդիսանում սոցփաթեթի շահառու կամ սույն որոշմամբ նախատեսված որևէ հիմքով դադարեցվել է նրանց սոցփաթեթից օգտվելու իրավունքը և այդ պատճառով չեն անցնել պարտադիր կանխարգելիչ բժշկական քննություն:».

5) որոշման N 1 հավելվածում՝

ա. 4-րդ կետի 2-րդ ենթակետը «հաշիվներին» բառից հետո լրացնել «՝ համապատասխան ծառայությունը տվյալ տարում կամ 12 ամսվա ընթացքում մատուցելու պայմանով» բառերով,

բ. 4-րդ կետի 4-րդ ենթակետը «օգտվելու» բառերից հետո լրացնել «և (կամ) սոցփաթեթի հաշվում առկա դրամական միջոցները կանխիկացնելու» բառերով,

գ. 4-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) սոցիալական փաթեթի սահմանաչափը մեկ անձի հաշվով չի կարող գերազանցել մեկ դրույքի (լրիվ աշխատաժամանակի) համար սահմանված գումարի չափը, իսկ մեկ դրույքից պակաս աշխատանքային ծանրաբեռնվածություն (ոչ լրիվ աշխատաժամանակ) ունենալու դեպքում գումարը կնվազեցվի համապատասխան չափով (օրինակ՝ կես դրույք աշխատանքային ծանրաբեռնվածություն ունենալու դեպքում՝ սոցիալական փաթեթի սահմանաչափը կկազմի սույն կարգի 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված գումարի կեսը).»,

դ. 17-րդ կետի 2-րդ նախադասությունը «համար» բառից հետո լրացնել հետևյալ բառերով «, որի դեպքում աշխատողի աշխատաժամանակի տևողությունը հիմնական և համատեղությամբ աշխատավայրերում միասին պետք է կազմի տվյալ աշխատողի համար

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված աշխատաժամանակի նորմալ տևողության 50 տոկոսը»,

ե. 19-րդ կետի 1-ին նախադասությունում «դրամական միջոցները» բառերը փոխարինել «ազատ դրամական միջոցները (ազատ են համարվում այն դրամական միջոցները, որոնք ենթակա չեն ուղղման սոցփաթեթի շրջանակներում մատուցված ծառայությունների դիմաց վճարումների (այդ թվում՝ սույն որոշման N 3 հավելվածի 2.4.9-րդ կետում նշված հանձնա-բարագրի հիման վրա պարբերական վճարումների) կամ սոցփաթեթի շրջանակներում տրամադրված վարկերի մասով մարումների)» բառերով.

6) որոշման N 3 հավելվածի 2.4.3-րդ կետը «կատարել» բառից հետո լրացնել «կամ որոշմամբ սահմանված կարգով սոցփաթեթի հաշվի միջոցները կանխիկացնել» բառերով, իսկ «դեպքում:» բառից հետո լրացնել հետևյալ նախադասությամբ. «Սույն կետով նախատեսված սահմանափակումը չի տարածվում այն անձանց նկատմամբ, ովքեր սոցփաթեթի հաշվի միջոցները օգտագործելու պահին չեն հանդիսանում սոցփաթեթի շահառու, կամ որոշմամբ նախատեսված որևէ հիմքով դադարեցվել է նրանց սոցփաթեթից օգտվելու իրավունքը և այդ պատճառով չեն անցնել պարտադիր կանխարգելիչ բժշկական քննություն:».

7) որոշումը լրացնել N 6 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. օգոստոսի 22
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
օգոստոսի 18-ի N 848 - Ն որոշման

«Հավելված N 6
ՀՀ կառավարության 2012 թվականի
դեկտեմբերի 27-ի N 1691 - Ն որոշման

ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՉՕԳՏՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն կարգով սահմանվում է զինծառայողի, քրեակատարողական ծառայողի, փրկարար ծառայության ծառայողի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման 5.2-րդ կետով նախատեսված՝ սոցիալական փաթեթի շահառուների պարտադիր կանխարգելիչ բժշկական քննությունից չօգտվելու վերաբերյալ միասնական տեղեկանքի (այսուհետ՝ միասնական տեղեկանք) տրամադրման ընթացակարգը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման 4.5-րդ կետի համաձայն զինծառայողի, քրեակատարողական ծառայողի, ինչպես նաև փրկարար ծառայության ծառայողի համար առողջապահական փաթեթի կանխարգելիչ բժշկական քննություն անցնելը սոցիալական փաթեթի ծառայություններից օգտվելու պարտադիր նախապայման չի հանդիսանում: Նշված անձինք իրենց սոցփաթեթի հաշիվը սպասարկող բանկ են ներկայացնում զինծառայող կամ քրեակատարողական ծառայող կամ փրկարար ծառայության ծառայող լինելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ կամ տեղեկանք կամ պարտադիր կանխարգելիչ բժշկական քննությունից չօգտվելու վերաբերյալ միասնական տեղեկանք՝ N 1 ձևին համապատասխան:

3. Պետական մարմինները միասնական տեղեկանքներ ստանալու համար, ըստ անհրաժեշտության, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն են ներկայացնում հայտ՝ N 2 ձևին համապատասխան, միասնական տեղեկանքի ստացման համար լիազորված անձի ինքնությունը հաստատող փաստաթուղթ և լիազորագիր:

4. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը միասնական տեղեկանքի տրամադրման և հաշվառման համար վարում է գրանցամատյան՝ համաձայն N 3 ձևով հաստատված միասնական տեղեկանքի տրամադրման և վերադարձման հաշվառման մատյանի:

5. Յուրաքանչյուր տարվա սկզբից իրականացվում է միասնական տեղեկանքների նոր համարակալում՝ ըստ պետական մարմինների կողմից յուրաքանչյուր տարվա համար ներկայացված հայտերի քանակի:

6. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից պետական մարմիններում միասնական տեղեկանքի ստացման համար լիազորված անձին տրամադրվում է միասնական տեղեկանք՝ վերջինիս ստացման համար ներկայացված հայտի հիման վրա՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետի պահանջներին համապատասխան:

7. Միասնական տեղեկանքը մինչև պետական մարմիններին տրամադրելը կնքվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ղեկավարի կնիքով:

8. Տվյալ տարվա համար նախատեսված, սակայն չօգտագործված միասնական տեղեկանքները, մինչև հաջորդ տարվա հունվարի 20-ը, պետական մարմինների կողմից

հանձնման-ընդունման ակտով վերադարձվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

9. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի ստեղծած հանձնաժողովը սույն կարգի 9-րդ կետով նախատեսված հիմքով վերադարձված միասնական տեղեկանքները ոչնչացնում է դրանք վերադարձնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ձև N 1

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

(միասնական տեղեկանքի հերթական համարը)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման 4.5-րդ կետը՝ զինծառայող կամ քրեակատարողական ծառայող կամ փրկարար ծառայության ծառայող հանդիսացող

_____

(անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի սերիան և համարը կամ նույնականացման քարտի համարը)

վրա չի տարածվում վերոհիշյալ որոշման N 1 հավելվածի 4-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջը:

Սույն միասնական տեղեկանքը հիմք է հանդիսանում _____ թվականին սոցիալական փաթեթի ծառայություններից օգտվելու համար:

Կ. Տ.

ՁԵ N 2

ՀԱՅՏ

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՍՏԱՑՄԱՆ

Կազմակերպության/հիմնարկի անվանումը_____
Գտնվելու վայրը _____
Փոստային հասցեն _____
Տրամադրման ամսաթիվը _____
Հեռախոսահամարը _____ ֆաքսը _____ էլ. փոստը _____

Խնդրում եմ 20__ թվականի ընթացքում հատկացնել _____ միասնական տեղեկանք:
քանակը (հատ)

_____	_____	_____
(պաշտոնը)	(ստորագրությունը)	(անունը, հայրանունը, ազգանունը)

Կ.Տ.

Ձև N 3

Մ Ա Տ Յ Ա Ն

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ

NN Ը/Կ	Դեղատոմսի գրվածքի անվանումը	Միասնական տեղեկանքը տրամադրելու ամսաթիվը ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը)	Տրամադրված միասնական տեղեկանքների քանակը (հատ)	Միասնական տեղեկանքը տրամադրելու հիմքը (գրությամբ կամ համի համարը և ամսաթիվը)	Տրամադրված առաջին տեղեկանքի հերթական համարը	Տրամադրված վերջին տեղեկանքի հերթական համարը	Տեղեկանքները հանձնող և ընդունող աշխատանց անունը, ազգանունը, հաշտանունը,	Ստացողների տվյալները վերադարձման ամսաթիվն (տարեթիվ, ամիս, օր)	Վերադարձված տեղեկանքների քանակը (հատ)	Վերադարձած առաջին տեղեկանքի հերթական համարը	Վերադարձած վերջին տեղեկանքի հերթական համարը	Ստացողներ տարածքային վերադարձման հիմքը (գրությամբ կամ համի համարը և ամսաթիվը)	Ստացող անունը, ազգանունը, հաշտանունը,	Ստացողի ստորագրությունը
1.														
2.														
3.														